ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

07.09.2026թ.

ՀՀ ԿԳՄՍ <<Գավառի արվեստի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ մանկավարժական աշխատողների հետևյալ թափուր տեղերի համար՝

<<Իտալերեն>> /144 ժամ/:
<<Երաժշտական ստեղծագործության վերլուծություն>> /68 ժամ/
<u>Հանրակրթական առարկաներ և առանցքային հմտություններ</u>
<<Ինֆորմատիկա>> /48 ժամ/
<<Համակարգչային օպերատորություն >> /36 ժամ/
<<Ձեռներեցություն >> /72 ժամ/

Վերոնշյալ թափուր տեղերի մրցույթին կարող են մասնակցել այն անձիք, ովքեր համապատասխանում են՝
1)Հանրակրթական առարկաների դեպքում՝ <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենիք 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին,
2)մասնագիտական առարկաների դեպքում՝ տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշիչով սահմանված պահանջներին:

Մրցույթին մասնակցելու համար անձը պետք է ներկայացնի ներքոհիշյալ փաստաթղթերը՝
1)դիմում ձև/լրացվում է տեղում/,
2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճեն),
3)անձը հաստատող փաստաթուղթ (բնօրինակը և պատճեն),
4)աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5)ինքնակենսագրություն,
6)մեկ լուսանկար 3x4 չափի,
7)այլ պետության քաղաքացիները ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստելու փաստաթուղթ, բացառության՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8)արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճեն),
9)հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում):

Մրցույթն անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին: Մասնակիցը Հաստատության կողմից նախապես կազմված բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդվելիք առարկային(մոդուլին) և մանկավարժական գործունեությանը, վիճակահանությամբ ընտրում է հարցատոմսը, որը բաղկացած է հինգ հարցից, որում կարող են ներառվել նաև 1-3 գործնական հարցեր և կարող է անձին տրվել մինչև հինգ հարակից հարց, որը նույնպես առնչվում է առաջադրանքին:

Փաստաթղթերը ընդունվում են ՀՀ Գեղարքունիքի մարզի ք. Գավառ, Բունիաթյան 25 հասցեում, 2026 թվականի մինչև սեպտեմբերի 15 -ը ներառյալ, ամեն օր ժամը 09:00-ից մինչև 17:00-ն, բացի շաբաթ, կիրակի օրերից :
Մրցույթը տեղի կունենա
2026թ. սեպտեմբեր 18 -ին ժամը 14:00-ին
ՀՀ Գեղարքունիքի մարզի ք. Գավառ, Բունիաթյան 25
Տեղեկության համար զանգահարել /0264/ 2-66-66 հեռախոսահամարով
Էլ. հասցե՝ erajshtakancollege@mail.ru